Հավելված
Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի և միջազգային առևտրի նախարարի
2026թ. սեպտեմբերի 2-ի
N- 2818-Լ հրամանի

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ-ԱՏԵՍՏԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է արտաքին գործերի և միջազգային առևտրի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) մրցութային-ատեստավորող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) աշխատակարգը:

2.Հանձնաժողովը ստեղծվում է դիվանագիտական ծառայության պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ և ատեստավորում անցկացնելու, ինչպես նաև ատեստավորման արդյունքով դիվանագետի՝ իր զբաղեցրած պաշտոնին համապատասխանությունը ստուգելու նպատակով:

3. Հանձնաժողովն իր լիազորություններն իրականացնում է արտաքին գործերի և միջազգային առևտրի նախարարի (այսուհետ՝ նախարար) հրամանով՝ հանձնաժողովի կազմը հաստատելու պահից, և դադարեցնում է իր գործունեությունը՝ համաձայն սույն աշխատակարգի:

4. Հանձնաժողովը մշտապես գործող մարմին չէ. այն ձևավորվում է յուրաքանչյուր տարի՝ մինչև հունվարի 15-ը, և գործում է մեկ տարի ժամկետով, որից հետո գործունեությունը դադարում է, և ձևավորվում է հանձնաժողովի նոր կազմ:

II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ, ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5. Հանձնաժողովը կազմված է առնվազն 5 անդամից:

6. Հանձնաժողովը ձևավորվում է նախարարի հրամանով:

7. Գլխավոր քարտուղարն ի պաշտոնե հանձնաժողովի նախագահն է:

8. Նախարարության անձնակազմի կառավարման վարչության պետն ի պաշտոնե հանձնաժողովի անդամ է և իրականացնում է հանձնաժողովի քարտուղարի գործառույթները:

9. Հանձնաժողովը՝

1) անձնակազմի կառավարման վարչությունից ստանում է դիվանագիտական ծառայության պաշտոն զբաղեցնելու համար մրցույթի, դիվանագիտական աստիճան ստանալու համար դիմած, ինչպես նաև դիվանագետի՝ իր զբաղեցրած պաշտոնին համապատասխանությունը ստուգելու նպատակով ատեստավորում անցնող անձանց ցուցակները.

2) մրցույթի դեպքում՝

ա) ձևավորում է թեստային փուլի հարցերը.

բ) ամփոփում և հրապարակում է գրավոր քննության արդյունքները.

գ) հրապարակում է մրցույթի հաջորդ՝ հարցազրույցի փուլ անցած մասնակիցների ցուցակը.

դ) մասնակիցների հետ անցկացնում է հարցազրույց.

ե) հարցազրույցի արդյունքներում յուրաքանչյուր մասնակցի վերաբերյալ կայացնում է որոշում.

զ) ամփոփում և հրապարակում է մրցույթի արդյունքները.

3) հարցազրույցի կամ փաստաթղթային ուսումասիրության եղանակով իրականացնում է ատեստավորում՝ դիվանագետին դիվանագիտական աստիճան շնորհելու, ինչպես նաև սահմանված կարգով դիվանագետի՝ իր զբաղեցրած պաշտոնին համապատասխանությունը ստուգելու նպատակով:

10. Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է օրենքով, սույն աշխատակարգով և այլ իրավական ակտերով:

11. Հանձնաժողովի նախագահը՝

1) ղեկավարում է հանձանաժողովի աշխատանքները.

2) հրավիրում և վարում է հանձնաժողովի նիստերը.

3) նախարարին է ներկայացնում հանձնաժողովի եզրակացությունը՝

ա) դիվանագետին հերթական, արտահերթ՝ մինչև երկու ավելի բարձր կամ ժամկետից շուտ դիվանագիտական աստիճան շնորհելու մասին.

բ) դիվանագետի՝ զբաղեցրած պաշտոնին համապատասխանության մասին.

գ) մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի (մասնակիցների) մասին:

12. Հանձնաժողովի քարտուղարը՝

1) իրականացնում է հանձնաժողովի բնականոն գործունեությունն ապահովելու համար անհրաժեշտ կազմակերպչական աշխատանքները.

2) վարում է հանձնաժողովի նիստերի արձանագրությունները.

3) ընդունում է մրցույթին մասնակցելու հայտ ներկայացրած թեկնածուների փաստաթղթերը և ստուգում դրանց ամբողջականությունը.

4) կազմում է դիվանագիտական աստիճան ստանալու համար դիմում ներկայացրած դիվանագետների ցանկը:

13. Հանձնաժողովի անդամը՝

1) մասնակցում է հանձնաժողովի նիստերին.

2) կարող է առաջարկություններ ներկայացնել հանձնաժողովի նախագահին՝ հանձնաժողովի աշխատանքների կազմակերպման վերաբերյալ.

3) ստորագրում է հանձնաժողովի նիստերի և քվեարկության արդյունքների արձանագրությունները, իսկ հատուկ կարծիք ունենալու դեպքում ստորագրության կողքին նշում է «Հատուկ կարծիքը կցվում է» բառերը:

III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

14. Հանձնաժողովի աշխատանքները կազմակերպվում են նիստերի միջոցով:

15. Հանձնաժողովի նիստերն իրավազոր են հանձնաժողովի անդամների առնվազն կեսից ավելիի մասնակցության դեպքում:

16. Հանձնաժողովի անդամի կողմից մրցույթի և ատեստավորման անցկացման ընթացակարգը խախտելու դեպքում հանձնաժողովը տվյալ հարցի վերաբերյալ կազմում է արձանագրություն, որի պատճենն անմիջապես ներկայացնում է նախարարին:

17. Նախարարն իր հրամանով կարող է հանձնաժողովի անդամին ազատել հանձնաժողովի կազմից և նշանակել նոր անդամ:

18. Մրցույթի դեպքում նիստին կարող են հրավիրվել այն ստորաբաժանումների ղեկավարները, որոնց թափուր պաշտոնների համալրման նպատակով անցկացվում է մրցույթը՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:

19. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են գաղտնի քվեարկությամբ՝ հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

20. Անվավեր քվեաթերթիկները չեն հաշվարկվում ձայների ընդհանուր քանակի մեջ:

21. Նիստի քվեարկության արդյունքում կազմվում է արձանագրություն, որը ստորագրում են հանձնաժողովի նախագահը, քարտուղարը և անդամները:

22. Հանձնաժողովը դիվանագետի ատեստավորման կամ մրցույթի քվեարկության արդյունքում ընդունում է հետևյալ եզրակացություններից մեկը՝

ա) շնորհել հերթական դիվանագիտական աստիճան.

բ) շնորհել հերթական դիվանագիտական աստիճան՝ ժամկետից շուտ.

գ) շնորհել արտահերթ՝ մինչև երկու ավելի բարձր դիվանագիտական աստիճան.

դ) դիվանագիտական աստիճան շնորհելու հարցը քննարկել մեկ տարի հետո.

ե) դիվանագետը համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին կամ չի համապատասխանում.

զ) մրցույթի արդյունքներով հաղթող ճանաչել:

23. Հանձնաժողովի ներկայացրած եզրակացությունների հիման վրա նախարարը ստորագրում է համապատասխան հրամաններ: